

ԼՈՒՍԻԱ Կ'ՈՒՉԷ ԶԵՆՔԸ ԿԱՊԵՆԷ, ԼԱՆՈՎ :

ՆԵՆՆԵԼԵ

Լուս կեցիր, լուս կեցիր :

Իրենէ կը մտնայ մայր դռնէն :

Ա՛հ, դեռ զձեզ կը գտնամ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Քոյրս :

Իրենէ

Վախ մը ունէի որ ժամանակին չհասնիմ :
Կրնայի երթալ կայարանը . . . Բայց կը վախ-
նամ թէ յուզուիմ : Ամուսինս հոն պիտի ըլ-
լայ, Նէննէլէ : Քեզի քիչ մը շօթուա բերի . . .
ճամբորդութեան համար :

ՄԱՔՍԻՄՈՍ

Բայց նայէ մէյմը : Ի՛նչ ընծայ : Ծնորհա-
կալ եղիր, շնորհակալ եղիր հօրաքրոջդ : Ա-
պրիս հօրաքոյր :

Իրենէ ափշած :

Ո՛վ է : Ո՛վ է որ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մեր եղբորորդին, Մաքսիմոս է :

Իրենէ

Ա՛հ, մեծցեր ես :

ՄԱՔՍԻՄՈՍ

Ո՛րչափ ատենէ ի վեր :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Շուտ :

ՆԵՆՆԵԼԵ

Մնաս բարով, հօրաքոյր :

Իրենէ

Կու գամ, կու գամ, ձեզի հետ կ'իջնամ :

ԼԱԻՐԻ

Շուտ պիտի դառնաք . . . սիրտս կ'ըսէ ինծի :

Խօսակցելով կ'ելլան մայր դռնէն :

Յովհաննէս կը նայի իրենց ելլալուն :

ՄԱՔՍԻՄՈՍ Յովհաննէսի :

Մի վախճար : Դորէն կը սկսիս :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Յուսանք :

Ամէնքը կ'երթան :

Լուսիս միայն կը մնայ և կը նստուի

թիկնաթոռի մը վրայ հեծկառու :

ՆԵՆՆԵԼԵ վազելով կը դառնայ, Լուսիսան թե-
ւորէն մէջ կ'առնէ և հազար անգամ կը պագ-
նէ երեսները :

ԼՈՒՍԻԱ

Նէննէլէ, Նէննէլէ :

ՆԵՆՆԵԼԵ

Լուս կեցիր, լուս կեցիր, լուս կեցիր :

կը փախչի :

Վաղարշապէս Կ'Եղան :

Թարգմ. Հ. ԱՐԽՅԱՅԱԿԻՍ ԳԱՅԱՊԱՆՅԱՆԻԱՆ

Շարայարեյի

ՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՄԱՅՈՒ

Thunatopsis (քնագրին վերնագիրը), կամ
Հայեցողութիւնն ի վերայ Մահոռ, Ուշիւրմ
Գրչոյն Պրայըրի երկն է և կը համարուի
Ամերիկեան բանաստեղծութեանց ամենէն ըն-
տիրենեան մին : Պրայըր (1794—1878)
զայն գրեց տասն և ինն տարեկան հասա-
կին, և իայ այս ոտանաւորը առաջինէն եր
որ Ամերիկացոց մէջ ձգնարիտ բանաստեղ-
ծական հանձարի գոյութիւնը ակնյայտնի և
բնական թերառ :

Բնութիւնն ունի բազմապիմ մի բարբառ
Իւր սիրահար այն անհատին որ գիտէ
Հաղորդակցիլ նորա տեսուն ձեւերով :
Իւր խնկազոյն ժամոց համար նա ունի
Հըրճուանաց ախորժ մի ձայն, մի ժպիտ
Եւ յորպիսի գեղեցկութեան ու շնորհաց .
Եւ գգուանօք մի կենսաբար ու հեշտին,
Թանգետ սահի իւր խոկմանց մէջ տիրազոյն,
Որով մեղմէ նոցա տաքնապն հիւսական :
Երբ ըս հոգին վերջին ժամուան պահս խորհուրդ
Գամ քան ըզգամ զերթ երեւիլ ճարակին,
Եւ օրհասին նրսեմ տեսիլը սառ պատանդն
Ու սեւ ծածկոյթ, խաւարն հեղձիկ ու սեղմ
(խուցն,

Բեզ սարսեցնեն, զքնա պայծառ երկնի տակ,
Եւ ունկընդիր բնութեան դասուց, մինչ երկրէն
Եւ իւր շրերէն, և այնբաց բարձունքէն,
Գայ մի մրմունջ. Սակաւ մի եւս, և ահա
Իւր համօրէն շրջանին մէջ, ոչ եւս զքեզ
Պիտի տեսնէ ամենապղտն արեգակ :

Ոչ ի հոգ ցուրտ, ուր զարկահար քո մարմին
Բիւր արտասուօք էր զնտեղուած, ոչ ի գոցն
Ովկանու, քո նմանութիւն պիտ' մընայ :
Երկիրն որ զքեզ սընայց' պիտ' ետ պահանջէ
Քո անցնումն՝ դարձեալ լուծել զայն յերկիր,
Եւ կորուսեալ ամենայն հետք մարդկային,
Հրաժարելով գոյութենէն քո ուրոյն,
Պարտիս երթալ և բազադուիլ ընդ տարերս
Յըյաւիտան, ապառառն զգայադիրկ

Լինել եղբայր, և հեղզ պաղձին՝ զոր խոփով
Շրջէ մըշակն գոհձիկի ու զայն կոստուէ:
Թեզոշն ի խոր պիտ՝ արձակէ իւր արմատը.
Եւ ծակոտէ քո կաւեղէն շինութիւն:

*
* *

Իսկ մշտական քո հանգրստեան առանձինն
Պիտ՝ զըզուես — ոչ այլ երբեք զու կարես
Շըքեղազոյն մի անկողնոյ ըզձանալ:
Նաճապետաց հետ գեռատի աշխարհին
Պիտի բազմիս, պիտի բազմիս աքբայից —
Հըզոքք երկրի — առաքլինեաց, իմաստնոց,
Պայծառ դիմաց և միզեմի սերբնոց
Գուշակոց հետ, բոլորեքեան յանդորբու
Ի մի ահեղ գերեզմանի լայնափոր:

Բըւրք ժայռակող և ինաւուրց զերթ արեւն,
Եւ ի միջի լըռութեամբ մի տիրամայն
Սփռեալ ծործորք, պատկառելի ծառաստանք,
Գեռք որ շարմին շըւորհձանմ՝ թուալմամբ,
Եւ մտականիք մըճլանուադ՝ որ ըզմարգս
կանաչեթինեն, և բովանդակն բուրսոյ՝
Մեղմուղաճատ ու գորշաթոյր անապատն
Ծիրանազարդ ովկէանու — ընդ ամէնն
Հանդիսաւոր զարդարանքներ են միայն
Մարդկութեան լայնատարած մեծ շիրմին:
Ոսկի արեւն, հեռաստանեայ մուրակը,
Երկին համայն ամբոխն անթիւ և անհուն,
Յամբահոյսով պարուց մէջէն փալիքլին
Թաւարածած բընակութեանց վրայ մահուան:
Ամէն նոքա որ կոխտանն զայս երկիր՝
Բուռ մ'են միայն այն ցեղոց քով որ նիրհն
Իւր ծոցին մէջ — Արշալուսին առ թեւերն,
Պարգայի գնա անապատներն թափանցէ,
Կամ ընգարձակ այն անտառաց մէջ սուղէ,
Որ թաւալէ հետն Որեկուն ու լըսէ
Ոչ մի այլ ձայն՝ բայց եթէ իւր գոռ կոծումն —
Իսկ — անդ են պեռ մեռեալք. և բերք բիրեկաց
Այն ամայի մեռութեանց մէջ լայնափիւս,
Այն բուլկէն ի վիր՝ երբ նախ տարիներն
Արին թըրիւք, ննջեն ի բուն վերջնական —
Եւ անդ մեռեալք տիրապետեն միայնակ:
Այսպէս և դու պարտիս հանգլիլ աստանոր,
Եւ ինչ՝ եթէ ապրոգներն դու փոխիս,
Ու չըլլայ ոք որ յուշագրէ քո միտեան:
Ամեն շնչոգ պիտ՝ մասնակցի քո բաղդին:
Երբոր արգէն մեկնած ևս զու այս գնդէն,

Ջըւարճամիտք պիտ՝ ծիծաղին անտարբեր,
Յախառն հոգիք պիտ՝ ընթանան ծանրաբայլ,
Եւ ամէն ոք որպէս առաջ անձանձիր
Պիտ՝ հայածէ իւր սիրտսուն ցըւորըններ.
Բայց և այնպէս ամենեքեան պարտին գալ
Ու յարպարել իւրեանց մահճի քո մտոր:
Մինչ դործուս հրկարաւոր շըլվմաներն
Մահին անցնին, որվիք մարդկան՝ պատանեակն
Ի մէջ կենաց կանաչ զարնան մշտազուարճ,
Երիտասարդն ու օրիւրդն միւր տիւց,
Ապարանից իւրոխտ բամբինն ու նաթիշոն,
Գողտրը մանկիկն ու կորացեալ ալեւորն —
Պիտ՝ մի առ մի քեզ մօտ զիզուին անոնցմէ,
Որք ի կարգին՝ պարտին շոցա հետեւի:

*
* *

Այնպէս ապրէ՝ որ երբ յերկնից գալ կոչումն
Որ ընթանայ խորհրդաւոր այն գաւառ,
Ուր ամէն ոք պիտ՝ զրաւէ իւր մեղարան՝
Լուս և ալօս պահլընաց մէջ մեռելոց,
Դու չըզրնաս քարահանուց զերթ ըստուկ,
Երեկոյին վարեալ ի գանա յիւր զնպան.
Այլ կազմուրեալ մի հաւատքով հաստատուն,
Դու կամբարանըն մօտեցիր, որպէս սմն՝
Որ ամիսփեալ գանձն ի ծածկոյթս իւր մահճին՝
Ընկուլմանի հեշտ անըջոց ակնկալու:

ՈՒՒԼԵՐԻ ԳԼԼԻՆ ԳՐԱՅԵՆԻ
Թարգմ. ԳԱՌԱԿ Ս. ԵՍԵՆԵԼԵԱՅԵՐԵԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

ՓԱՐԻՋ. 8. Մ. 26. ԴԵՐՈՋ. — Ընդունած ենք Ձեր
յղածները: Շնորհակալութիւն այն ամէ.
նուն համար որ մեր անձնականին կը վե.
բաժնի: «Նսթերն» գահացուցիչ են. իսկ
զատկելը որով իրագործելի է, առանց
երկրորդ առաջարկութեան:

ԹԱՐԻՋ. 10. ԻԱՆ ԱՅԻՍԿԵԼԻ. — Շնորհակալու-
թիւն Ձեր նամակի բովանդակութեան. կա-
րեւի էր «Բաղադէպ»ը Ձեր ծրագրի հա-
մեմատ հրատարակել, եթէ ապահով ըլ-
լայնէր որ այդ կերպով 1000 բաժանորդ
պիտի կարենայինք գտնել: «Բաղադէպ»ի
ներկայացան ամէն տեղ մուտք գտնելն և
զգալական ծաւալելն՝ մեզ յոյս կու տայ
մի օր այդ փափաքն իրագործելու:

ՊՐԻՊՈՆ. 9. 8. Ա. — Մի անգը. ոսկի ընդու-
նած ենք ի զին «Որքունի»ներուն և այլ
զգեւորու: Մեր վերջին գրութիւնը ընդու-
նեցաք: